

ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԱՐԾԱՐԾՈՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԲՆԱԳԻՐ

12-րդ դ. վերջերի և 13-րդ դ. առաջին տասնամյակների Հայաստանի, մասամբ և Կիլիկյան Հայկական Թագավորության սրընթաց վերելքը լուրջ հարված ստացավ մոնղոլական արշավանքների պատճառով: Ստեղծված կացությունից երկիրը փրկելու համար հայ պետական և հոգևոր գործիչներից պահանջվում էր մեծ հմտություն, ճկուն քաղաքական միտք և անձնազոհություն, որի անհերևակայելի օրինակները տվեցին հայ աշխարհիկ և հոգևոր գործիչները ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկյան Հայկական Թագավորությունում: Այդ իմաստով սերունդների հավիտենական երախտագիտությանն ու ամենաբարձր գնահատականին են արժանի հատկապես Կիլիկյան պետական այրերը՝ Սմբատ Գունդստաբլն ու Հեթում Ա թագավորը, որոնք, հանուն երկրի և հայության փրկության, հետևելով Հայաստանի մի շարք իշխանների օրինակին, դիմեցին այն ժամանակների համար չտեսնված ծանր ճանապարհորդության, դեպի մոնղոլական կայսրության մայրաքաղաք Կարակորում՝ բազում փորձությունների ենթարկելով իրենց և ուղեկիցներին: Արդյունքում փրկվեց ոչ միայն Կիլիկյան Հայկական Թագավորությունը, այլև հնարավոր եղավ թեթևացնել մոնղոլների կողմից նվաճված Հայաստանի վիճակը և ստեղծել հայ-մոնղոլական ռազմաքաղաքական դաշինք:

Ստեղծված բարդ իրադրության մեջ իրենց լավագույնս դրսևորեցին նաև Հայ Եկեղեցու ականավոր շատ գործիչներ, որոնց մեջ առավել արգասաբերներից հանդիսացավ Հովհաննես Պլուզ Երզնկացի վարդապետը:

Իր անհանգիստ կյանքի ընթացքում անընդհատ շրջելով Հայաստանի և հայաշատ տարբեր վայրերում՝ Հովհաննես Երզնկացին քաջատեղյակ է դառնում ինչպես ողջ հայությանն, այնպես էլ նրա առանձին հատվածներին հուզող հարցերին և առանց ընկրկելու բազում դժվարությունների առջև՝ նվիրվում դրանց լուծմանը: Այդ են վկայում նրա նամակներն ու խրատները՝ ուղղված ինչպես հայ արքունիքին, իշխաններին, հոգևորականներին, Երզնկայի և Անիի քաղաքաբնակներին, այնպես էլ նրա անդուլ պայքարը Հայ Եկեղեցու շահերի ու սկզբունքների պաշտպանության համար:

Քաջ գիտակցելով, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունի ցաք ու ցրիվ եղած հայ ժողովրդի պետական առանձին միավորների համար Հայոց Եկեղեցու ամրապնդումն ու հզորացումը, Երզնկացին անընդհատ հայտնա-

բարում է, որ մեծ է ու միասնական հայոց երգը և Հայոց Եկեղեցին: Այդ միասնության խորհրդանիշն, ըստ նրա, Գրիգոր Լուսավորիչն է ու Հայ Եկեղեցու առաքելական դավանանքը. «Զի որպէս մի է հայրն մեր և զամենայն բարիս յանձն իւր տպաւորեաց, այսպէս մի է և միակրօն ազգն հայոց, և ամենայն գերազանց պարգևօք մեծարեալ եղեն»—գրում է նա Լուսավորչին նվիրված իր նշանավոր ներբողում[1]:

Ընդհանուր առմամբ Հովհաննես Պլուզ Երզնկացու ծառայությունները ինչպես երկրի հոգևոր, այնպես էլ աշխարհիկ ոլորտի ու մշակույթի բնագավառում այնքան հարուստ ու բազմաբնույթ են, որ այս սեղմ խոսքում հնարավոր չէ տալ նրա ուրվապատկերն անգամ[2]: Մեր նպատակն այստեղ այլ է, ներկայացվող բնագրի առիթով միայն մի փոքր ճաշակ տալ դավանաբանական խնդիրների առնչությամբ Երզնկացու կատարած օգտաշատ գործունեության մասին:

Պետք է փաստել, որ 13-րդ դ. երկրորդ կեսին դավանաբանական խնդիրները դարձյալ սպառնալից ընթացք ստացան: Թե որքանով էր ճիշտ Կիլիկյան առանձին թագավորների և որոշ հոգևորականների այն քաղաքականությունը, որը նպատակ ուներ ինչ-ինչ զիջումների գնով օգնություն ստանալ Հռոմից ու եվրոպական երկրներից, այլ խնդիր է, փաստը մնում է փաստ, որ այդ հանգամանքը կար և ինչպես Կիլիկիայում, այնպես էլ Հայաստանում այն առաջ էր բերում հոգևորականության ու աշխարհիկ տարբեր շերտերի ուժեղ հակազդեցություն՝ վտանգելով Հայ Եկեղեցու միասնությունը: Իբրև կանոն, հակառակորդ կողմերը հանդես էին բերում խիստ անհանդուրժողականություն, հաճախ նաև հացահայտ թշնամություն: Այդ պարագաներում ուշագրավ երևույթ է, որ Հայ Եկեղեցու ավանդական սկզբունքներին նվիրված և տեսական մեծ մտածողության տեր Հովհաննես Պլուզ Երզնկացին հավասարապես գնահատվել և մեծարվել է ընդդիմադիր հոսանքների կողմից: Միարարական տրամադրություններ ունեցող ամենանշանավոր գործիչներն անգամ խնդրում են Երզնկացուն գրելու կանոնական, խրատական գրություններ, քարոզներ կարդալ և այլն: Երզնկացին նման դեպքերում ևս պաշտպանում է Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքը, սակայն առավել զուսպ արտահայտություններով՝ ձգտելով միասնության և խուսափելով անցանկալի հետևանքներից: Այդ հանգամանքը պարզորոշ նկատվում է նույն հարցի՝ Քրիստոսի ծննդյան և մկրտության վերաբերյալ նրա երկու քարոզներից: Դրանցից մեկում, պատճառաբանելով տարբեր դավանանքների առաջացումը, գրում է. «Յետոյ ոմանք բաժանեցին ըստ այլ և այլ կարծեաց, ոմանք՝ պատճառանօք, և այլք հերձուածողական ամբարշտութեամբ և ոմանք՝ տգիտական, անուսումնութեամբ... իսկ մեք, որք ճիշտ և ուղիղ հաւատով ունիմք զդաւանութիւնս սրբոց առաքելոցն և զմեծ զերիցս երանեալ Լուսաւորչին մերոյ Սրբոյն Գրիգորի և ըստ տուչութեան նոցա մեզ ի միում աւուր կատարեմք տօնախմբութիւն աստուածային իրագործութեան ի մեզ և վասն մեր եղելոց, ճշմարիտ Աստուած խոստովանիմք զնա միևնոյն ծննդեամբ և մկրտութեամբն...»[3]:

---

[1] Սոփերք հայկականք, Յովհաննու սարկաւագայ, Վարդանայ Բարձրաբերդցւոյ, Յովհաննէս Երզնկացւոյ ներբողինք ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Վենետիկ, 1853, էջ 102—103:

[2] Այդ մասին շատ ավելի մանրամասն տես **Ա. Սրապյան,** Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 20—25, և **Է. Բաղդասարյան,** Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 100—105:

[3] Մատենադարան, ձեռ. № 2178, էջ 101ա:

Մինչդեռ Կիլիկիայում նույն հարցերին անդրադառնալիս նա հանդես է բերում պետական ու եկեղեցական նշանավոր գործչին վայել շրջահայեցություն՝ աշխատելով իր ասածը հիմնավորել ոչ այնքան այս կամ այն դավանանքի քարացած սկզբունքներով, որքան տրամաբանական դատողություններով: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Երզնկացու՝ Անավարզայում կարդացած «Ի բան մարգարէին Դաւթի՝ աբանչելի եղև գիտութիւն քո յիս...» քարոզը, որ նա կարդում է ժամանակի խոշորագույն գիտնական-աստվածաբան, սակայն իր միարարական հակումներով հայտնի Գրիգոր Անավարզեցու պատվերով: Ուշագրավ է, որ քարոզի վերնագրում Երզնկացին, Անավարզեցու եպիսկոպոս լինելու հանգամանքը նշելուց առաջ, նրան պատվում է վարդապետ տիտղոսով:

Քարոզում Երզնկացին հիմնականում անդրադառնում է միաբնակության և երկաբնակության խնդիրներին և դիվանագիտական նրբությամբ հարցը տեղափոխում տրամաբանության և փորձի ոլորտը: Ապացուցելու համար Քրիստոսի մի էությունը՝ նա դիմում է բնական երևույթներին, այնպես, ինչպես հրի ու երկաթի փոխներգործությունից որակական փոփոխության է ենթարկվում միայն երկաթը, այնպես էլ Քրիստոսի աստվածային ու մարդկային բնության միավորումից որակական փոփոխության է ենթարկվում մարդկայինը՝ ձուլվելով աստվածայինի հետ մի էության մեջ: Առավել տրամաբանական դարձնելու համար իր ասածը՝ Երզնկացին հարցը քննում է ելնելով ավատատիրական աշխարհիկ հարաբերությունների էությունից՝ բացատրելով երկու էության անընդունելի լինելը. «Զի ի երկու բնութիւնն երկու կամք են և երկու խորհուրդք և երկու տեարք. և թագաւորութիւն բաժանեալ յանձն աւերի. զի բնութիւն բնութեան հակառակ մարտակիցք են միմեանց և կամ մինն՝ տէր և միւսն ծառա»: Եվ եթե երկու բնություն է, ապա՝ «Աստուած ի մարմնի իւրում կռիւ ունի, իբրև ընկեր առ ընկեր, և զիարդ կարէ նա այլում տալ խաղաղութիւն»[4]:

Երզնկացուն, սակայն, դավանաբանական խնդիրները իսկապես հետաքրքրում են նախևառաջ իր ժողովրդի պետական և հոգևոր շահերի տեսանկյունից, պարզորոշ նկատվում է նաև այն փաստից, որ նա շատ հեռու է կույր մոլեռանդությունից և հաճախ պատմական մոտեցում է հանդես բերում քրիստոնեական վարդապետության մեջ տարբեր ուղղությունների հանդես գալու հարցին: Իր մեկ ուրիշ ստեղծագործության մեջ «Ասացուածք ի բանն Տեառն, որ ասէ՝ «Ես եմ հովիւն քաջ...» քարոզում նա ուղղակի նշում է, որ տարբեր ուղղությունների և տեսությունների հանդես գալը բացատրվում է սուրբ հայրերի տարբեր ժամանակներում և տարբեր պայմաններում ստեղծագործելու հանգամանքով. «Եւ զի ոչ էին սոքա ի միում ժամանակի, թէպէտ և զմի աստուածութիւն երրորդութիւնն քարոզէին և զմի ճանապարհ ճշմարտութիւն գնային: Այլ յայլ և յայլ ժամանակս եղեն վասն մեծ խորհրդոյն»[5]:

Այսպիսով, Երզնկացին ինքն իսկ անձնական օրինակ է ցույց տալիս՝ հետևելով իր այն խորհրդին, թե ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր տերերը պարտավոր են հանուն հավատքի և հայրենիքի փրկության լինել զգույշ և շրջահայաց, որպեսզի յուրաքանչյուր քայլ կատարվի տեղին ու ժամանակին, ինչպես պահանջում էր քրիստոնեության մեծագույն արքը-

---

[4] Մատենադարան, ձեռ. № 2173, էջ 124ա—բ:

[5] Անդ, էջ 337ա—338ա:

թյուններից Պողոս Առաքյալը, որ քարոզում էր պայքարել ոչ միայն ճշմարտությամբ ու ազնվությամբ, այլև «պարտ է առնուլ աւձի խորագիտութեանէն»[6]: Այսինքն գործել խելամտորեն՝ ելնելով իրական հանգամանքներից: Իսկ իրական հանգամանքներն իսկապես այնպիսին էին, որ, սեփականը պաշտպանելով և պահպանելով, պետք էր ձգտել ամեն կերպ հորդորել տարբեր դավանանքի Եկեղեցիներին ու մանավանդ Հայ Եկեղեցու ներսում եղած հոսանքներին ոչ թե թշնամանքի, այլ միասնության:

Հենց այս առումով, կարծում ենք, չափազանց հետաքրքիր է Մատենադարանի № 610 ձեռագրում Երզնկացու մի շարք գործերի հարևանությամբ ներկայացված «Յաղագս միաբանութեան և անջատութեան» խորագրով փոքրածավալ երկը, ուր թեև չի նշվում Երզնկացու հեղինակ լինելը, սակայն նրա երկերի մեջ ներմուծված լինելը, հեղինակի ոչ միայն հայ, այլև օտար եկեղեցիների ծիսական-կանոնական սկզբունքների քաջատեղյակությունը և առավելապես հոգևոր հարցերի նկատմամբ լայնախոհ պատմական մոտեցումն ու մի շարք մտքերի համանմանությունը, կարծում ենք, բավարար հիմք են տալիս մեծ հավանականությամբ այն համարելու Երզնկացու ստեղծագործություններից մեկը:

Բնագիրն այնքան խոսուն ու դյուրամատչելի է, որ մենք չենք ցանկանում ընդարձակ մեջբերումներ անել և ծանրաբեռնել մեր խոսքը, այլ կցանկանայինք տալ բանասիրական և պատմագիտական մի քանի փոքրիկ դիտողություններ:

Առկա մի արտահայտությունից պարզ երևում է, որ երկը գրված է դավանաբանական բուռն վեճերի ընթացքում, երբ հատկապես հարձակման եռակողմ թիրախ էր դարձել հայ առաքելական եկեղեցին: Բնագրի հենց սկզբում նա ուղղակի նշում է, որ «Զազգս քրիստոնէից տեսանեմք ոչ ըստ անուանն և զմիութիւն ունին կանոնական սահմանի»[7] բնականաբար անհեթեթ է համարում Հայ Եկեղեցուն հասցեագրված մեղադրանքները. «Եւ այսպէս բազում ունելով յիւրաքանչիր ոք սահման առանձինն և միայն հայք նախատեալք լինին ոչ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից, այլ առանձինն միայնաբար ընթանալ»[8]:

Այս վկայությունը ինքնին մի ապացույց է, թե կողմերը որքան կարևորություն էին տալիս Հայ Եկեղեցու դիրքին: Իհարկե, հունական ու կաթոլիկական եկեղեցիները հազիվ թե կարող էին հուսալ՝ միմյանց սեփական դավանանքը պարտադրելու: Ինչ վերաբերում է բնագրում առկա երրորդ վիճող կողմին՝ ասորական եկեղեցուն, ապա հասկանալի է, որ այս շրջանում նա, նախ չուներ Հայ Եկեղեցու հզորությունը, ու բացի այդ ասորական տարրը քաղաքական անկախության համար այնպիսի ակտիվ պայքար չէր մղում, ինչպես հայերը և զրկված էր պետականությունից, հետևաբար կողմերի համար չուներ այն նշանակությունը, ինչ ունեին հայերը:

Որ բնագիրը գրվել է 13-րդ դ. վերջերին, որևէ կասկած չի կարող հարուցել, քանզի հենց այդ ժամանակ էր, որ ի տարբերություն նախորդ շրջանների, երբ Հայ Եկեղեցին առավելապես հարձակման էր ենթարկվում հունական եկեղեցու կողմից, միաժամանակյա թիրախ դարձավ և լատինական, և հունական եկեղեցիների համար: Երկրորդ կարևոր հանգամանքը,

---

[6] Անդ, էջ 96ա:

[7] Մատենադարան, ձեռ. № 610, էջ 108բ:

[8] Անդ, էջ 109ա:

որ մեզ բերում է այդ համոզման, այն է, որ իսկապես այս շրջանում էր, որ աստրական եկեղեցին թեև կորցրել էր իր նախկին ուժն ու հեղինակությունը, սակայն շարունակում էր որոշակի դեր խաղալ ոչ միայն միջեկեղեցական հարաբերություններում, այլև դիվանագիտության ասպարեզում: Այս առիթով բավական է հիշել ասորի հոգևորականների ակտիվ միջնորդական գործունեությունը քրիստոնեական երկրների ու մոնղոլների միջև:

Եվ ահա, հեղինակն իր առջև նպատակ է դնում ցույց տալու, որ Հայ Եկեղեցուն մեղադրողները իրենք հենց շատ հարցերում համաձայն են հայերի հետ և ընդհակառակը, միմյանց նկատմամբ ունեն բազում տարբերություններ. «Բայց պարտ է այնոցիկ, որք ոչ գիտիցեն և կամ թէ կամաւ տգիտանան, ցուցնել զմիաբանութիւն ազգիս հայոց այլ առ քրիստոնեայս, զի գիտացեալք, յամաւթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն»[9]:

Եվ իրոք, կետ առ կետ փաստելով մի կողմից Հայ Եկեղեցու ծիսական ու կանոնական կարգերի նմանություններն ու տարբերությունները մյուս եկեղեցիների հետ, ինչպես նաև մյուս եկեղեցիների միմյանց միջև եղած ընդհանրացումներն ու տարբերությունները, նա քրիստոնեական գործչին վայել լայնախոհությամբ նշում է, որ այդ ամենը ավանդություններ են և չեն խաթարում հավատը, հետևաբար պետք չէ դրանց չափազանց մեծ կարևորություն տալ. «Զի և այն աւանդութիւն է տաւնախմբութիւն և ոչ հաւատ և ոչ բարկանայ առ այս Քրիստոս յայլ և յայլ ժամու տաւնել...»[10]:

ՅԱՂԱԳՍ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԶԱՏՈՒԹԵԱՆ*

Զազգս քրիստոնէից տեսանեմք ոչ ըստ անուանն և զմիութիւնն ունին կանոնական սահմանի: Զի ահա ղատինացիք առանձնակս ունելով աւանդութիւն:

Առաջին՝ ի բաժակէն ոչ տալ ժողովրդեանն: Երկրորդ՝ մի քահանա երիցս անգամ ի միում աւուր պատարագս մատուցանել: Երրորդ՝ և զայն ի միում եկեղեցոջ առանց խտրութեան: Չորրորդ՝ և յերկոսեան ճրագալոյսն ոչ առնել պատարագ: Հինգերորդ՝ զբիրակադուրն** զոր ասեն ժողովրդեանն: Վեցերորդ՝ այլ ազգ ունել զտաւնս սրբոցն և ոչ ըստ այսմաւուրացն: Եօթերորդ՝ կին ոչ առնուլ քահանայից և զմորուսն աճել, և այլ գոն յոլովք, մանաւանդ ի բանս հոգոյն:

Իսկ յոյնք, առաջին նախասրբեալ պատարագ, երկրորդ՝ կրկին ջուր՝ ջերմ և ցուրտ, երրորդ՝ զբոլորն ոչ հանել ի սեղանն զհաց պատարագին, այլ մասն ինչ, չորրորդ մնացուած պատարագի, որպէս ինքեանք քաջ գի-

---

[9] Անդ:

[10] Անդ, էջ 110ա—բ: Նկատի ունենալով բնագրի լեզվի մատչելիությունը և առ այսօր անտիպ լինելը, որոշեցինք այն ներկայացնել հարազատորեն: Կարծում ենք այն կհետաքրքրի ինչպես հոգևորականներին, այնպես էլ բազմաթիվ հավատացյալների:

* Մատենադարան, ձեռ. № 610, էջ 108բ—110բ:

** Բիրկաթուր (լատիներեն Purgatorium) բառի աղավաղված ձևն է, որ երկու անգամ վկայված է Կոստանդին Ա կաթողիկոսի Հեթում Ա-ին ուղղված նամակում: Կաթողիկոսը պաշտպանելով Հայ Եկեղեցու դավանանքը կաթոլիկական կղերի հարձակումները, վերջին ներիս մեղադրում է քրիստոնեական եկեղեցուն խորթ նորամուծություններում, որոնց թվում և քավարանի (=բիրկաթուր) գոյությունը:

տեն, հինգերորդ՝ զչեզոքս արեղայ առնել***, վեցերորդ զձև զգեստուն այլաբար ունել, եօթերորդ՝ ի պահս և յաղաւթս և յայլ աւանդութիւնս բազում ունել անջատումն:

Ասորիք, առաջին՝ [ի] ուրբաթազէնն, երկրորդ՝ ումանց խոստովանութիւն ոչ ունել, երրորդ՝ միով մատամբ զնշանն դրոշմել, չորրորդ՝ հրաման տալ սարկաւագաց աստիճան առելոց կին առնուլ և քահանա լինել, հինգերորդ՝ ումանց թլպատութիւն ունել, վեցերորդ՝ և զհաց պատարագին ձիթով աւծեն և այլս գոն յոլովս, զի յորժամ քննիցեն գտանեն:

Եւ այսպէս բազումս ունելով իւրաքանչիւրոք սահման առանձինն և միայն հայք նախատելք լինին, ոչ ունել միաբանութիւն ընդ այլս ի քրիստոնէից, այլ առանձինն միայնաբար ընթանալ: Բայց պարտ է այնոցիք, որք ոչ գիտիցեն և կամ թէ կամաւ տգիտանան, ցուցանել զմիաբանութիւն ազգիս հայոց այլ առ քրիստոնէայսս, զի գիտացեալք ցամաւթ լիցին յաղթեալք ի ճշմարտութենէն:

Առ լատինացիսս զուգաւորութիւն Հայաստանեայց եկեղեցոյ, առաջին՝ զհաց պատարագին բաղարջ առնել, երկրորդ՝ գաւռն զենուլ ի տաւնս, երրորդ՝ վասն ննջեցելոց ի յանբանից զենուլ և տալ ողորմութիւն աղքատաց, չորրորդ՝ զսօն սրբոցն յառաջիկայն անոցուցանել աւր, հինգերորդ՝ այսմ աւուրաւք ոչ տաւնել ըստ յունաց, այլ այլով աւրինակաւն /տ/աւնել և այլ բազում/ս/:

Իսկ առ ասորիս ունել միաբանութիւն, առաջին՝ ի լուծանել զճրագալոյցսն . . . . . .**** իրս յեւղս և յայլ կերակուր բաց ի մսոյ, երկրորդ՝ ի Քրիստոս բնութեանցն միացելոց մի ասել բնութիւն ըստ սրբոցն Աթանասի և Կիւրղի, երրորդ՝ երեք սրբեանն զխաչեցարն յաւելուլ, չորրորդ՝ ի ժողովոյն Քաղկեդոնի խորշել:

Եւ առ յոյնս ունել միաբանութիւն հայոց, առաջին՝ ըստ դրութեան կարգի աղաւթից, որ յեկեղեցիս նոցա, երկրորդ՝ ի յաղուհացսն ոչ ունել հրաման պատարագ մատուցանել, բաց ի նախասրբեալ պատարագէն և այն նախ սկսեալ և ոչ առժամայն, որպէս և անուանն իսկ ցուցանէ, երրորդ՝ առ քահանայս զգուշութիւն աւրինաւք ունել, թէպէտ և ումանք կաղան առ այս, չորրորդ՝ յարդեան ժամանակս այսմ աւուրաւք տաւնել ումանց և այսոքիկ առ յոյնս: Բայց ումանք բերանաբաց եղեալ հակառակին զծնունդն և որ ըստ նորին ամենեցուն ունել հաւասարակաբար: Եւ յայսոսիկ միաբանել ամենեցուն բաց ի հայոց: Եվ այսոքիկ աւանդութիւն և ոչ հաւատ, և եզով միաբանութիւն, մասամբք և ոչ յոգնագոյն և ըստ այսմ միաբանութեան և զմերս տեսանեմք եկեղեցի ունել եզով միաբանութիւն առ այլս քրիստոնէայսս, որպէս աճա յերկոսեան ճրագալոյցսն ի ծննդեանն և ի յարութեանս միաբանութիւնս հայք և ասորիք և յոյնք: Եւ ղատինի ոչ, վասնզի սոքա պատարագ մատուցանեն ի նախատաւն ծննդեան և յարութեանն և ղատինք ոչ, և ի հաց պատարագին զբոլորն մատուցանել և ոչ մասն ինչ հայք և ասորիք և յոյնք և ղատինք ոչ: Եւ յառնուլ զաստիճան սարկաւագութեան, ոչ տալ հրաման կին առնուլ հայք, ղատինք և յոյնք, բայց ասորիք ոչ: Եւ այսոքիկ թէև ո-

---

*** Հայերենում, ի թիվս այլ իմաստասերների, չեզոք նշանակում է նաև ներքինի. տես՝ Բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Ս. Ղազար, 1837, էջ 575: Հենց այդ իմաստով էլ օգտագործում է Երզնկացին, նկատի ունենալով, որ այլ, այդ թվում և Հայոց Եկեղեցին, մերժում է այդ սովորությունը:

**** Զեռագիրն անընթեռնելի է:

մանց ոչ թուեցին որպէս փոքր կարծեցեալք, սակայն աւանդութիւն և ոչ հաւատ, որպէս և ծննդեանն տաւն, զոր միաբան ասեն տաւնել այլոց քրիստոնէից բացի հայոց: Զի և այն աւանդութիւն է տաւնախմբութիւն և ոչ հաւատ և ոչ բարկանայ առ այս Քրիստոս յայլ և յայլ ժամու տաւնել և սա մի է ի խորհրդականաց տաւնից կենարարին մերոյ և ոչ միաբանին յայս տաւնախմբութիւն ամենայն հաւատացեալ ժողովուրդ, իսկ վասն ջրոյն չէ պարտ ասել, զի յոյնք թերի ցուցանեն զղատինացոց խառնումն ինքեանց կրկին խառնմամբ և զայն ի խորհուրդ առեալ*****:

ԷԴՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

***** Շնորհակալություն ենք հայտնում Շահե արքեպիսկոպոս Աճեմյանին տարբեր եկեղեցիների ծիսական ու կանոնական առանձին խնդիրների լուսաբանման շուրջը տված բացատրությունների համար: